

20 Փարա

Նամակ կամ որ եւ ինչ գրութիւն պէտք է ուղղել
ԱՌ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Մ Ա Ղ Ի Կ Շարքարքերի
Կ. Պոլիս, Եսկի Չապիէի փողոց թիւ 61
ՇԱԲԱԹ Կ. ՊԵՏՐՈՒԹԵԱՆԻ տպարանը

درعليه اسكي ضبطه سواقند و نمر و ٦١
(نشان برريان مطبعه سى)

Direction du Journal ZAHIK
Constantinople rue Eski Zaptié No. 61
chez M. NICHAN, BERBERIAN



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Քաղաքական, Գիտական եւ Գրական

20 Փարա

ԱՌԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար տարեկան 20 դրոշ
Կառավարութեան տարեկան 30 »
Օտար երկրներու » 8 ֆրանք

Թղթատարութեան ծախքը Մարտիկի վարչութեան
կը պահանջէ :

Տնօրէնութեան ուղղութեամբ գրութիւնք եւ շնորհ
տրուիր :

Ազգային կամ քաղաքական եւ կամ շահագործող
կարգիւն :

ԱԴԱՍԵԱՆ

Մոռացութիւն, այդ միջին ամառը չլիտի ծածկէ Ազգամանի յիշատակը. ան իր հրէշի թեւերով չը պիտի խեղդէ մեծ արուեստագէտը, ու մեր միտքը պիտի հետեւի միշտ այն խանդավառ ծափերուն, այն հիացման աղաղակներուն, որոտագոյ կեցցէներուն ժխտին, որոնք ահա կարծես կը պայթին տակաւին դէպի Ազգամանի փառքով լուսաւորուած Հայ թատերաբեմն, և Ազգաման հոն է կանգնած սրտի այնպիսի զեղումներով և դիրքով և իր բազմակերպ այնպէս տարածած թատերասէր հասարակութեան, իր թէ կարենար սեղմել իր փառքին այդ ամբողջ հանդիսատեսներն իր լայն կուրծքին վրայ :

Եւ երբ առօրեայ աշխարհն իր աղգած խիտ մտածումներով մեր միտքը կը արդդէ ստուերներու մէջ, զոր չեն կրնար փարատել գեղարուեստի և գրականութեան փայլեր. բայց ահա Ազգամանի յիշատակը կողջայ այդ ստուերները մէկդի ընել, ինչպէս իրենք ընդ հանուր հիւստեան և յափշտակութեան ալիքները կարծես ճեղքելով կ'երեւէր ան Հայ բեմին վրայ :

Անոր յիշատակին մեծարանք մ'է վեհեակոյ Միսիթարեան միաբանութեան գեւե Նոր հատարակած բանաստեղծ գերտեսնին Քերուածքը (*), մի և նոյն ժամանակ այս գարնան օրերու մէջ ամենէն չքնաղ ծաղիկփունջն է անոր գերեզմանին վրայ գրուելու :

Եւ հիմա Ազգաման գոհունակութեան ժպիտով մը բացուած թող նայի հոգիներու երկնային բալէն և տեսնէ որ թէպէտ իր վերջին օրերը արցունքներով և հառաչներով հիւսուեցան, բայց իր հոգին ահա կը վայելէ այն անմահ երանութիւնն, որ ամէն մեծ մարդերու երազն է, այսինքն յիշատակով մը ապրել :

Բանանք իր նոր գործը : Առաջին էջէն կը տեսնենք գերասանին ճշգրտատիպ պատկերը. հոն Ազգաման ճոխ թիկնաթուղի մը վրայ նստած՝ անթիթիթ քեզ կը նայի. սիրուն և շնորհալից երիտասարդ մ'է միշտ և արուեստագէտի մը նրբութիւններն ունի իր այդ պարզ ձեւին մէջ :

Ու կը սկսինք կարգաւ իր կենսագրութիւնը, 50 էջերու մէջ ամփոփուած, զոր կը ստորագրէ Հ. Վ. Հաջունի, և որով կ'ուզէ կենսագիրն խառնել իր ձայնն «աշխարհահաշակ գերասանին ճոխ մտաց և հանձարոյն յետին և անոյշ արձագանքներուն հետ (այսինքն Քերուածքին հետ), որոնք կ'ենեն ահա անոր արտաւարակ գերեզմանին խորքերէն :

Հ. Վ. Հաջունի հակիրճ նախա-

(*) ՔԵՐԱԾՔԻ ՄԻՍԻԹԱՐԵԱՆ ԳԵՆԵՐԱԼԱՆ ՊԵՏՐՈՒԹԵԱՆ (1879-91) և կենսագրութիւն. 80 վեհեակ Ս. Հազար :

բանէ մը վերջ կը բաժնէ իր կենսագրութիւնը ութ գլուխներու, որոց առաջինն մէջ կը պատկերացնէ Ազգամանի վարճ եւ բարբ. յետոյ իր ցարիչ, բանաստեղծ, իմաստասէր, վիպասան, բնագրագէտ և հուսկ ուրեմն իր ԳԵՆԵՐԱԼԱՆ ունեցած անոր ձիւրքերը կը յայտնէ ճոխարար և արժանաւոր գնահատութեամբ :

Ինչ աղւոր կեանք մ'է այդ գերասանին կեանքը անոր առաջին օրերէն իսկ. աշխոյժ և համակերպ մանկիկ մ'է ան, իր մանկական եւ անդին հետ օժտուած սուր յիշողութեամբ և արթուն մտքով, ու միշտ վեհանձն, հեղափոխարար, օրախօս, կատակասէր. իր կրթութեան գործը կը յանձնուի լաւ ձեռքերու և կանուխէն կը թափուի շատ գեղեցիկ կաղապարի մէջ :

Ազգամանի կոչումը զանի թատերաբեմը կը սկսէր. այդ պատճառաւ իր կամաւ չյաջողեցաւ ուրիշ ասպարէզներու մէջ, և թէպէտ մանկութեան տեսնած հեղափոխութեան տեսնելու օրը, որ միշտ վեհանձն, հեղափոխարար, օրախօս, կատակասէր. իր կրթութեան գործը կը յանձնուի լաւ ձեռքերու և կանուխէն կը թափուի շատ գեղեցիկ կաղապարի մէջ :

Ազգամանի կոչումը զանի թատերաբեմը կը սկսէր. այդ պատճառաւ իր կամաւ չյաջողեցաւ ուրիշ ասպարէզներու մէջ, և թէպէտ մանկութեան տեսնած հեղափոխութեան տեսնելու օրը, որ միշտ վեհանձն, հեղափոխարար, օրախօս, կատակասէր. իր կրթութեան գործը կը յանձնուի լաւ ձեռքերու և կանուխէն կը թափուի շատ գեղեցիկ կաղապարի մէջ :

Հայ թատերի պատմութեան մէջ փառաւոր գրուագը պիտի կազմէ Ազգամանի կեանքը և թէպէտ անոր մեծ փառքը հոն կ'ամփոփուի, բայց իր նկարիչ եւ իր ցարիչը, իր բանաստեղծ իր Քերուածքներով, իր իմաստասէր իր ցարիչներով, և ուր ուրեք իր Քերուածքներով, իր լիպարներով իր վեպերով, իր քննադատ իր Համբարձումի ուսումնասիրութեամբ յիշուելու արժանի է միշտ :

Հաջունիի կենսագրականին ը. գլուխը, ԱՌԱՄԵԱՆ, իր ԳԵՆԵՐԱԼԱՆ, պէտք է աւանդին մտադրութեամբ կարգաւ. ինչն իսկ կենսագիրը որչափ որ գրչի բաւական կարողութեամբ մը կը գրէ այս նիւթին վրայ, բայց կը խոստովանի թէ իր փափաքէր ինք ունենալ այնպիսի լեզու մը որ ստեղծուած ըլլար սոսկ այս անուագրական հանձարը իր իսկութեան մէջ ներկայացնելու համար :

Այս համետ յայտարարութեան տակ երբ նիւթի մասին անձեռնհասութիւնը ցոյց կուտայ նա, շատ անկեղծ է և իրաւացի որովհետեւ. ինք վանական մը ըլլալով, ընկղմած շատ

անգամ մտամոխիման և խոհմանց մէջ, զուրկ թատերաբեմի հրապոյրներէն, աշխարհիկ կեանքի այդ փայլերէն, չպիտի կրնար անշուշտ բարձր ոճով մը պատմել Ազգամանի բեմական յաղթանակները, մանաւանդ վերջին տարիներուն, երբ հէք գերասանը զգալով կարծես իր կեանքի մատաւրտ վախճանը, այնքան ճիգերով և իրաւապահութեամբ կը կատարէր իր գերերը (*) :

Այս կենսագրութեան կը յաջորդէ իր Քերուածքն տարիներու կարգով (1879-1891). ընդհանրապէս Ռուսահայոց բարբառով յօրինուած, ձեռն ոճով և բանաստեղծական երանգներով մեծ մասամբ, որոց մէջ խօսքի արուեստաւորը գրչի արուեստաւոր մ'է միանգամայն : Անոր քնարը առանձնութեան մէջ, իր հիւանդ օրերուն ամենէն մեծ տիպիկն եղած է. ինքնատիպ և ընդորձակ իր մուսան. բանաստեղծ Ազգամանը կը տեսնուի այս հատորին մէջ եւ կենսագրական, բաւարարական, կրօնական և իմաստասիրական նիւթերու համար կը հնչեցնէ իր քնարին թելերը :

Ձեռք ուղեր այդ գերթուածներու ուսումնասիրութիւնը կատարելով ՄԱՂԻԻԻ այս անձուկ էջերուն մէջ, այլ կը փափաքէր որ գրական և թատերական աշխարհներու մէջ հասարակապէս փայլող գերասանին այս գրերը հանրային ջերմ ընդունելութեան արժանանայ :

ՍՄՈՒՆ ԳԱՐԱՄԱՃԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱՆ

ԱՄԲՈՒՄԱՌ ԸՄՊԵԼԻՆԵՐ ԵՒ ԱՆՈՆԹ ԳՈՐԾԱՌՈՒԹԻՒՆԸ

Աղբուր ըմպելիներու կարգին մէջ կան գինին, գարեջուրը և խմորօղին, որք խմորեալ ըմպելիներ (boissons fermentés) կը կոչուին, ու օղին, ֆոնետալ, քիթը, ապսկեր, որք ողբից ըմպելիներ (liqueurs) կը կոչուին :

Գինին խաղողին հիւթը խմորելով կը պատրաստուի, գարեջուրը՝ գալիով պատրաստուած նիւթ մը խմորելով, իսկ խմորօղին՝ նոյն իսկ խմորին հիւթը խմորելով : Գինին թորելով անոր աղբուրը կը գտնեն, այդ աղբուրը կը պատրաստեն օղին (shuk և masurfa), քիթը, ապսկեր, էլիֆիթները ու դեռ շատ տեսակ ողբիցներ :

Այսքան աղբուրներուն մէջ ամենէն բնական պատրաստութիւնը գինին է, որ չափաւոր աղբուրով և ուրիշ յառուկութիւններով ամենէն զերամարսն ու օգտակարն է, երբ յարմար խաղողէ լաւագոյն կերպով պատրաստուած ըլլայ : Գարեջուրը և խմորօղին ալ բնական պատրաստութիւններ են, բայց ասոնք տկար ըմպելիներ են, ու քիչ աղբուր պէտք է շատ խմել. բայց շատ խմելու ստուգելով ընկղմում (dilatation

(*) Այս գերերու վերաբերեալ ութ նկարները զարդարեն կենսագրութեան վերջին գլուխը : Այդ նկարներն են Համբարձումի իր մղեկներով, Օրբիլը, Արապի իր, Գիւն, Գարեք, Գոհարս, եւ Ուրիշ Ազգար :

de l'estomac) յառաջ կը բերէ : Օղին, ֆոնետալ շատ զորաւոր են, մանաւանդ և անբնական ուստի դժուարաւ կը ծծուին և ստամոքսը կը նեղեն : Ապսկեր, ամեռ, պիքքեր, վիւնուր, Պիսապի այնպիսի աղբուր պատրաստութիւններ են, որք թէ և ախորժակը կը գրգռեն, բայց իրենց մէկ վնասակար տարրին միջոցաւ ուղեղը կը թունաւորեն յամրաբար. ասոր հետեւանքը կ'ըլլայ յուսմոտութիւն (epilepsie, սառա) կամ ջղախի ուրիշ անկարգութիւններ, որք յառաջ կուգան կ'ամ գործածողին վրայ և կ'ամ անոր սերնդեան մէջ :

Ուրեմն ամեն աղբուր իր անպատեհութիւնը ունի. իրեն նուազ վնասակար, առաջին տեղը պէտք է գինին տայ, բայց շատ տեսակ գինիներ կան. խաղողին տեսակը, տեղւոյն կլիման, հողին վիճակը, պատրաստութեան եղանակը տարբեր տարբեր գինիներ կ'արտադրեն : Գինիները իրենց բաղադրութեան համեմատ կրնանք այսպէս դասակարգել :

Ա. — Աղբուր զինիներ, ինչպէս Ուրեմն, Ալիֆանք, Մալուաքի, Մահաւ, Մալալա, ասոնք շուտով կ'աղբեն :

Բ. — Տիպ գինիներ (պուրսօ), ինչպէս են Քաֆոր, Պորսո, Կիպուս, ասոնք քանակ կը պարունակեն, որ զանոնք երկար ատեն ապականուել կը պահէ : Աստի այս գինիները կրնան շատ հիւնաւ, ու որքան հիւնան այնքան կ'աղանաւան :

Գ. — Թթուանու գինիներ, ինչպէս են Հուսնո, Ռօֆալի. ասոնք սեղանի համար ամենէն աւելի կը փնտուին : Ծամփալիան փրփուրը ըլլալուն համար մասնաւոր յարգ ունի :

Դ. — Կատարեալ գինիներ, որոց մէջ աղբուր, չաբար, քանակը և ուրիշ թթուներ չափաւորապէս գտնուելուն համար ամենէն աւելի գործածուածներն են :

Թուրքոյ գինիներուն մէջ լաւ տեսակները քիչ են, որովհետեւ արհեստին նոր յառաջադիւնութեանց համաձայն չէ որ կը պատրաստուին. առհասարակ մեր վերեւ ցոյց տուած չորս տեսակներին վերջինին կը վերաբերին :

Խաղողախեղ գինիները շատցած են. գինի շատ տեսակ խաղողախեղները չընարած են, օրինակի համար՝ գաճ, կապար, երկաթի արշնապ, օտար աղբուր, և այլն կը խառնեն : Բոլորովին արհեստական գինիներ ալ կը չինեն՝ փաքաքիսի աղբուր, ըստ, ներկ ու զանազան բիւրական մարմիններ իրար խառնելով : Այս տեսակ խաղողախեղ գինիներ խմելէ նախամեծար է բնաւ գինի չխմել :

Պոլսոյ մէջ ու Թուրքոյ շատ կողմերը օղին ալ շատ տարածուած ըմպելի մ'է, եթէ օղին գինիի աղբուրով պատրաստուած ըլլայ, շատ լաւ. բայց եթէ բրինձի կամ փաքաքիսի աղբուրով պատրաստուած ըլլայ, շատ վնասակար է, պէտք չէ խմել :

Գինները որ Պոլսոյ մէջ մեծ գինեւորները իրենց կը պատրաստեն օղին, բայց գինիի աղբուր սուր ըլլալուն համար միւս աղբուրներ կը գործածեն. մանաւանդ այն տարբարանոց օղին, զոր լեզուն գաւաթով կուտան, փաքաքիսի աղբուր շատ վար տեսակով պատրաստուած է ու բոլորովին թոյնի պէս կ'աղգէ :

Աղբուր ըմպելիներուն ու անոնց յառուկութիւններուն վրայ հարեւանցի ակնարկ մը պատենել վերջը, անցնինք անոնց գիտաւոր տարրին, աղբուրն, մեր

վրայ ըրած ներգործութիւնը քննել : Աղբուր գիւրալաւ հեղուկ մ'է, աւելի դիւրալաւ. քան իւրը, այրելով մեծ ջերմութիւն կ'արտադրէ : Երբ մէկը գաւաթ մը գինի կամ քոնեալ խմել, աղբուր ստամոքսին երակներէն ծծուելով արեան մէջ կ'անցնի ու կ'երթայ մարմնոյն ամեն կողմերը, կ'այրի ու ջերմութիւն կը պատճառէ :

Այս ջերմութիւնը, զոր աղբուր յառաջ կը բերէ մեր ներքը, կը մտնուի ուղեղն ու ջիւղերը, հետեւաբար խանդ, համարձակութիւն, ոյժ կուգայ մեր վրայ. արեան շրջանը կը սաստկանայ, մարտողութիւնը կ'ապագանայ, շարժումները կ'ըլլան աւելի կորովի, միտքը աւելի կը պայծառանայ պահ մը, որ վաղանցուկ է. վերջապէս ընդհանուր օգուտ մը : Այս օգուտն է որ աղբուրն կը սպասեն գործաւորը, ատենաբանը, նաւաստին, որոց սակայն անհրաժեշտ չէ այն :

Գինին ներքի է խմել աւալին խառնուածք ունեցող մարդուն, որուն համար ուժաւոր մ'է. ուրիշ խառնուածքներ պէտք չունին աղբուրն գրգռութիւն ընդունելու : Աղբուր տալով իր պատճառելուն համար կը յարմարի ծըմուր մեր ընդ մեր խմել. ցուրտ կը լիմայի մարդոց չափաւորապէս աղբուր գործածելը չմեղադրուիր : Մարտուրութիւնը գիւրացնելու համար, միայն ճաշի տակ մէկ կամ երկու գաւաթ գինի կամ քոնեալ խմել կարելի է անոնց համար անոր որ պէտք ունին, Այս պայմաններէն ու պարագաներէն դուրս աղբուր ըմպելի գործածութիւնը չեմ ըմբռնու :

Բայց եթէ աղբուր չափէն աւելի առնուի, գինիութիւն յառաջ կուգայ, Գինիութիւնը գէշ վիճակ մ'է. մարմինին մէջ ընդհանուր անկարգութիւն մը կը պատճառէ. զգայարանը կը չիթի, շարժումները կը քիսալուին, մարտողութիւնը անկարգ է ու ախորժակը գաղաւթած, քիչքիչական ոյժը մեծապէս պակասած է այնքան որ մարմինն ծանրութիւնը չկրնար ալ եւս հաւասարակշռուել : Երբեք անոնց վրայ լեզուն անյօդ, անհասկանալի խօսքերու մէջ կը մտնուի, միտքին յատակութիւնը կորսնցուցած՝ առանց պատճառի գտարթ է կամ առանց հակառակորդի կը վիճի, կը բարկանայ, կը կուռի, կարծես յիմարացած է :

Բարեբաղդարար այս վիճակը, որ արագհաստի է քիչքիչականին տուած վնասներուն համար ու ծիծաղելի՝ բարոյականին, արժանապատուութեան բերած արատին համար, վաղանցուկ է. քանի մը ժամէն երկնային կը սթափի գինիութիւնէն ու քիչ քիչ կը վերստանայ իր կորսնցուցածները, — առողջութիւն, ոյժ, ախորժակ, մտքի հաւասարակշռութիւն :

Երբեք անոնց թէ ինչպէս ամեն գործ, ամեն արարք իր նպատակն ունի, նոյնպէս ալ գինի կամ ուրիշ աղբուր մը խմել նպատակ մը պէտք է ունենայ. եթէ պէտք կայ զայն գործածելու, ճաշի ժամանակ միայն մէկ երկու գաւաթ խմել, բայց եթէ պէտք չկայ, կաթիլն անգամ աւելորդ է ու վնասակար :

Եւ արդ, դու պատանի, ինչու ցանկական աղբուր կը նայիս այդ գաւաթին. կը կարծես թէ գինի, օղի խմելով մեծ մարդու, չափահասութեան շնորհ մ'է. դեռ փոքր ես ու պէտք չես կրնար ունենալ այդ ըմպելիներուն : Դիտելի որ թոյն մ'է աղբուր ու քո-

Անբեր գետնի մը վրայ ինկած այս թուղթի թիւը (կուտ) քառասուն տարի բեղմնավորութեան յառաջընթացը պահպանելու համար, 35 տարիէ ի վեր, իւր բազմաթիւ տերեւներով մասամբ ծածկած է Ձինական մերկութիւնը:

Արժանիքը քիչ չափ ամէն տեղ կը դնանաւորէ: Երկնային կայսրութեան պետերը հաճած են փաշի մէջէն գտնուած այս մատնին իրենց մասին անցնել և քանից իրենց ան ծայրածիր երկրին թշնամեաց ցոյց տալով զայն՝ անոնց աչքը կուրացընելու չափ չլացնել:

Այս հանձնարելու ծերունին Մոսկուայի մէջ թագադրութեան հանդէսին ներկայ գտնուելէն ետքը՝ Բաբելոն պիտի ուղեւորուի և հոն, առիթ պիտի ունենայ ոչ միայն քաղաքական հարցերով զբաղելու, այլ և մօտէն տեսնելու եւրոպական քաղաքակրթութիւնը, որուն իւր երկրին մէջ ծաւալուելու այնքան շնորհ կուտայից է:

Եւ երբ Բեքին վերադառնայ, անշուշտ գեղին ցեղին մեծագոյն հատուածը պիտի օգտուի իւր կատարելիք ամէն կարգի օգտակար ձեռնարկներէն:

ՀՆԱՌԱԳՐԱԼՈՒՐԻ

Բարիկ. — Լի-Հունի-Չանի փոխարքայն Ռուսական Կառավար Ընկերութեան շնորհակալութեամբ Օտենսա պիտի ուղեւորուի:

Վիեննա. — Հալաչի-Կալանայ պարագլուխ Տօգդ. Լիւկըր, նորընտիր քաղաքային խորհրդոյն մէջ, դարձեալ քաղաքական ընտրուեցաւ 42րդ դէմ 96 ընդդէմ:

Փիերսպուրի. — Հալաչի Մենելը կայսրը ներկայացուցելով պիտի չորիկ Ձարին թագադրութեան հանդէսին:

ձիւղաղաղա. — Հրաման հասաւ ձիւղաղաղի հետեւակ պահպան զօրաց հրամանատար Գուրիլին զօրավարին՝ որ անմիջապէս հարաւային Ասիոյէ երթալ՝ Մարապէլէնքերուն դէմ պատերազմող զօրաց վերին հրամանատարութիւնը ստանձնելու համար:

Բարիկ. — Մերակոյտն որոշում մը ըրաւ որով Մատակարարի համար կառավարութեան կողմէ խնդրուած վարկերը կը յետաձգէ, մինչեւ որ երկրորդ անգամ անհաշտ պահանջարկներ նախարարութիւնը մը ունենայ որ երկուց ժողովոց միանգամայն վստահութիւնը դըրաւած ըլլայ:

Բարիկ. — Մերակոյտն տուած անվստահութեան որոշումը վրայ՝ Պ. Պուռ-ժուպի դաշինքը իւր ծածկարկանք մատուցող Պ. Ֆելքս Ֆոնի, Երեւոյ. Ժողովն ամսոյ 23ին նիստ ընելու հրահրուեցաւ:

Ազգային լուրեր

Նաւն ժողովոյ որոշումը Երուսաղեմայ միաբաններէն Արթ. Տ. Անանիա վարդապետ եղբորոց առաջնորդութեան փոխանորդ կարգուեցաւ, նախորդ փոխանորդին վախճանման պատճառաւ:

Կրօնական ժողովոյ որոշումը Ղալաթիոյ Ս. Լուսաւորի եկեղեցւոյ քարոզչի կարգուեցաւ Արթ. Տ. Եղիշի Ծ. Վ. Գալփագճեան փոխանակ Արթ. Տ. Վաչան Ծ. Վ. Յակոբեանի, որ Պանարմա և Պալքէսէի առաջնորդութեան տեղապահ կարգուելով ի մօտոյ իւր պաշտօնատեղին երթալու հրահանգ ստացած է ժողովին կողմէն:

Գոնթութեամբ կ'իմանանք թէ Միլըրտիէ Էֆ. Կիւմիւշեան, նշանաւոր գաղղիաբանը, Մայր վարժարանին անօրէն կարգուած է:

Կը շնորհաւորենք թէ՛ մեր պատուաւոր պաշտօնակիցը և թէ՛ Գոնթ Գարուի ազգայինները, որ գիտցած են այնքան լաւ ընտրութիւն մը ընել:

Զորեքարթի, Գաղաքական ժողովն, ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զոր, նիստ բաց և քննարկելու օրակարգին վրայ գտնուած ինչ ինչ խնդիրներով:

Վաղը, ժամը 6½-ին, մեր անդիւրաբնականութիւնը, առաջնորդ գաղաքական, Անթուան Էֆենի Արթուր, իւր Օրթաքէյի տանը մէջ, ընտանեկան նուագահանդէս մը պիտի կատարէ:

Հայ արուեստագէտն, անշուշտ, իւր բարեկամաց շրջանակին մէջ անգամ մըն ալ ի յայտ պիտի բերէ իւր արուեստին մէջ ունեցած մեծ հմտութիւնը:

Պրուսայի և շրջակայից մէջէն բաժանորդագրուել փափագողք, թող հաճին դիմել առ Անդրանիկ Էֆ. Իւանեան, որ կը գտնուի Սէթ պաշի Գեօրգիւսի կողմերը:

Ներքին լուրեր

Մեծ շուկան. — Կայս. Իրաւոյ մը հրամայեց որ անմիջապէս ձեռնարկուի Մեծ Շուկային նորոգութեան, շուկային նորոգութեան համար յատկապէս կազմուել յանձնաժողովին մատուցած տեղեկագրին պատճառաւ: Յանձնաժողովը կ'առաջարկէ իր արդի վիճակը պահելով նորոգութիւններ կատարել:

Մաք. — Ֆիլիպիէի առեւտրական սենեակին որոշեց ինքնուրու Պուլկար կառավարութեան հարկ եղած դիմումն ընել Օսմ. կառավարութեան, որպէս զի երկու երկրներու մէջ փոխանակուած վաճառքներն մաքսէ դեր ըլլան:

Երկարութիւն. — Անատոլի. երկաթուղեաց էսկի չէֆը - Գոնեա գծին չի-

նուծիւնը մինչեւ Էկիւն աւարտած է. հետեւաբար կառախուրներն մինչեւ վերջինք առնել պիտի երթեան:

Վարդի խլ. — Էնկիւրիի Զորում գաւառակին մէջ ալ վարդենիի մակուածեան ձեռնարկուած է. Կուսակալութիւնը երկրագործական նախարարութեան 15000 տունի ուզած է:

Վերջերս որոշում մը տրուած է որ վարդի իւրը հինգ տարի տասնորդի տուրքէ ազատ պիտի ըլլայ, որպէս զի այս արհեստը զարգանայ և ընդհանրանայ:

Որբանուկ. — Այսօրն նահանգին մէջ Գալլը ետգար և Մաղնիսայի տնկարաններէն մէկ տարուան մէջ 441,000 Ամերիկեան որթաւունի բաշխուել են որթալուիճէ վնասեալ այգեպաններուն:

Օսմ. մարտնչութիւն. — Չորս շաբաթ ետքը իզմիրի նահանգիստը պիտի ժամանեն երեք չորս մարտնչաւ բաղկացեալ ֆրանսական նաւախումբ մը:

Միւլիւր Էսիմ Բաշա. — Զէյթուն գաւառի շրջանը գործարարին հրամանատար միւլիւր Էսիմ Բաշայի պաշտօնին տիրուող պիտի ըլլայ՝ Հալէպի, Անտանայի և շրջակայից արտաւտուր ընդհանուր հրամանատար:

Սնանկութիւն. — Էրզրումի առեւտրական գաւառական որոշմամբ Պալքարեան և ընկերութիւնը երեսուն հազար ոսկուայ բացով անակապեալ հաշուուած է. Այդ որոշում պաշտօնական հեռագրով հաղորդուած ըլլալով, նոյն վաճառատան մայրաքաղաքի մէջ ունեցած մասնաճիւղն ալ գոցուեցաւ:

Մուրացկաններ. — Բ. Դրան հրամանին վրայ, աստիճանութիւնը շաբաթ օրէն սկսաւ հաւաքել մուրացկանները և զանոնք Համագալային անկեանոց զրկել:

Կամուրջ Եւ խնդիր. — Պետական Խորհուրդն որոշեց որ խնդիրներու եւ կամուրջներու շինութեան մէջ եթէ մէկը չուզէ աշխատել և կամ աշխատութեան փոխարէն դրամ տալ, իբրեւ պատիժ չորս աւուր տեղ վեց աշխատել եւ կամ երկու աւուր աշխատութեան ըստակը վճարէ:

Հանգ. — Այստուրքի (Այսթըն) Չիլիքիճէ գիւղին մէջ գտնուած զլեւաւայի հանքը մը շահագործման համար մենաշնորհ պիտի տրուի Պետրոս Էֆ. Սիմոնեանի:

Իսկ հազարապետ Իպրահիմ պէյի պաշտօն խնամուած է զինուորական տեսչակէտով քննութիւններ կատարել Այսթընի նահանգին մէջ ձկնաչիւրճեան և ֆիշիտի երեսուն հանած հանքերուն նրկատնամբ:

Ողորում. — Սըվազի նահանգին մէջ ձիւներն հալելով հեղեղներ գոյացրել եւ գետակները յորդեր են, սակայն ու եւ վնաս չէ պատահել:

Ձիւնուր. — Սապան կ'ըսէ թէ Պիթլիսի նահանգին կ'իմծ գաւառին կեդրոնին մէջ գտնուած զինուոր, ձապաղ-Զուր գաւառակը յրկուեր են:

Մահու պատիժ. — Երեքարթի, Ոճրադատ ատենանք դատեց մարդասպան Մուստաֆան, որ կանխամտաւորութեամբ սպաննած էր կառապան Օսմանը:

Ատենանք զայն մահուան դատապարտեց:

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒՄ

—Ապրիլ 8 թուականով Բարձր. Մեծ Եպարքոսին ուղղեալ հեռագրեր ծանուցած են թէ Պրուսայի, Տրապիզոնի, Մուսուլի, Պիթլիսի, Տիարպէթի, Գոնեայի, Սըվազի, Ատանայի, Հալէպի, Էնկիւրիի, Վանայ, Էրզրումի, Գոնեայի, Հալէպի և Տիարպէթիի նահանգներուն մէջ ալ, շնորհիւ Վեհ. Սուլթանին, կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տրուէ:

ՀԵՏԱԿՔԻՐԻՆԵՐՈՒՆ

Մեծն Բրիտանիոյ բնակչաց կօշիկներուն և մուճակներուն համար 12 միլիոն անգլ. ոսկու պարտութեամբ կաշի կըսպառուի:

Ամէն օր, աշխարհի մէջ, երեք հազար ամուսնութիւն կը կատարուին, և այս ամուսնութիւնը, ընդհանրապէս, տեղի կ'ունենան Յունիս ամայն մէջ. Այս վերջինոյ մէջ Հայերը չեն գտնուիր կարծեմ:

Անգղիա ամեն տարի մէկ միլիոն տուրքի լուցիկ կ'արտադրուի:

Հոնոնոսի գիւղերը 11, Շամրանեաները 12, Սէրին 19, Մարաքիտոն 34, Պրանտին 53,4 և Ուլիքին 54 առ հարիւր աղբի կը պարուսնակին:

Աւելի քան 1,000,000 անձինք, այր, կին, տղայ, յետին թշուառութեան մէջ են Հնդկաստանի մէջ:

Ա. Զ. Դ.

Իստիկուարում Ս. Խաչ վարժարանին համար քննարկուող գաւառական ուսուցիչ մը կ'ուզուի:

Դիմել նոյն վարժարանը:

Բ. Ռ. Ա. Թ. Ի. Գ.

Գաղղիկերէն լեզուի բաժնիւնում ուսուցիչ մը, որ բաժնիքի ճիւղին համար իր բարձր մասնաւոր գիւցին շնորհիւ թիւ ժամանակին մէջ շատ յաջող արդիւնքներ տալու գաղանքը ձեռք բերած է, Աղգ. վարժարանաց եւ տուներու մէջ մասնաւոր բաժնիքի դասեր տալու եւ եթէ ուզուի լեզուն ալ սորվեցնելու պատրաստ է:

Դիմել Դաւթեան գործակալութեան գրասենեակը, թիւ 16 Գաղաքի խան:

ԱՐՏԱՇԷՍ ՄԱՂԱՋԱՆԱՆ

Գրասուն և կազմաւոր Մեծան փողոց թիւ 63

Յաճախողք գոհ պիտի մնան թէ՛ զինքնուրու ծանուցութեան և թէ՛ յանձնարարեալ գործերուն խնամեալ պատրաստութեան:

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

Փնջիկ. պատկերադար, նախապատրաստական տարի հայերն արտասանութեանց:

ՀԱՅԻԱՔԱՆՈՅՑ, մասն Ա. Գ. —Ապագաութիւն, բարոյալից և հետաքրքրաշարժ բովանդակութիւն, մասնաւոր պատկերներով զարդարուած և ճոխացած շարադրութեանց նիւթերով:

—Մասն Բ. — Բ. —Ապագաութիւն, պատկերադար, ճոխ պարունակութիւն:

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵՉՈՒՐ. — Ամեն մարդու անհրաժեշտ, բառը 30,000:

ՆԱՄԱԿԱՆ ԱՌՁԵՌՆ. — Նամակագրութեան արուեստին կատարեալ առաջնորդ մը:

Կեդրոնատեղի Գ. Պօլիս, Հաճօրուօ խան, թիւ, 20:

ՇԱՅԱԳ

Այս վաճառատան մէջ կը ծախուին տուն տեսակ լաթէն, Սպինաթ օղակ, Դաւալ, Դաւալ, Դաւալ, Դաւալ և գիւղերը շատ գոհացուցիչ են, Յաճախողք պէտք է դիմեն Պօլիս, Սուլթան Համամ, թիւ 20:

Ա. Զ. Դ.

Հրդեհի և կենաց ապահովագրութեան ամենակենսական պէտքը զգացողներուն՝ ներկայիս կը յայտարարուի թէ պատրաստ եմ իրենց ընդարձակ տեղեկութիւններ տալ:

Այս մասին մեծ հմտութիւն ունիմ և իմ պարկշտութիւնս անտարակուսելի է. ըսեմ նաև թէ կրնամ նախապէս ո'ր և էրկերութեան մը ապահովագրեալ առաւ մը, աւելի շահաւոր եղանակաւ մը, իսկ ընկերութեան մը ապահովագրել:

Ձիւ տեսնել փափագողք դիմեն Մալիկ խորագրատուներ:

ՄԱՆՈՒԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Գ. Ս. ԱՐԱՎԱՆՈՐՈՒԼՈ

ԳԱՐԱՆԹԻՆԱ ՓՈՂՈՅ, ԼԷՈՆ ԽԱՆ

Այս վաճառատան մէջ կը ծախուին երկաթ ուղեղներ, շոգենաւներ, գործարաններ համար պէտք եղած խալ և այլ տեսակ ներկեր, վրձնիչներ, խողովակներ, և այլն:

Բ. ՍԻՎԻՏՍԻ Գ. ԱՆԱՏԱՍԻՍԻ

« ԼՈՒՍԻՆ » ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Սուրբան Համամ թիւ 2-36

Այս վաճառատուն որ Սինիէի մէջ քննարկուող նախկին միջնաւոր փոխարքուած է, կը վաճառէ ամեն տեսակ մետաքսեայ բոլորեայ և բանալի-կեղծի կերպաններ, ընտիր թաւիշներ, մանթիլ համար լայն ծանր քիչ լայն, ճերմակեղծներ, թիւլ բերաններ, կարասեայ ծածկոցներ նաև օժտի համար սնտուկի ծանր գորգեր եւայլն, եւայլն: Գիւղերը խիստ գոհացուցիչ: Այս տեսակ վաճառքներ առնելու համար անգամ մը մեր վաճառատուներ այցելողները գոհ պիտի մնան միշտ:

Արտօգիտ

ԱՆՏՈՆ ՍԱԳԱՆԱՆ

ՏՈՐԵՔԻ-ԽԱՐԱՊՈՐ

Ե. Գ. Ա. Թ. Ա. Լ. Ա. Ն.

ՏՊԱՐ. — ՆՆՆ. Կ. ՊԵՐՊԵՆԵՆ

Կ. Պոլիս Էսկի Ջապիի Ջապիի Թ. 61

գնաց և հինգ վայրեան վերջը չորհաւաք ձամբայ ելաւ:

Առաջին նաւամատուցը՝ Պէշկիթալ, բազմաթիւ ձամբորդ ելնելով, չորհաւաքէն մէջ մնացեալ ձամբորդները փոքր ինչ հանգիստ գտան և խեղաց կողմը նայող խաղաղութիւնը իրենց խաղաղ սկսան, զանազակ պիտի թուի անշուշտ եթէ ըսենք թէ՛ մեր նկարագրած խնայողները, նարտի և օղիի անխնայ ստակ կը վատեն:

Երեսուն տարեկանի մօտ գերուկ շուկայի խանութպան մը, ձեռքի լեզուն տուրաւ չորհաւաքին կաթնային վրայ տեղադրելէ յետոյ, աթոռակ մը առնելով, պիւֆէին մօտ նստող իւր մէկ բարեկամին քովը դնաց:

—Բարի իրիկուն, Մանուկ աղա, այս ուրիշ ուր այսօր Պօլիս լինի:

—Օ՛ր, բարի իրիկուն, Ղալաթիոյ կողմը անհաշտ մէկը տեսնել հարկ եղաւ, ստիպուեցայ այսօր իմանալ... տապալակել մէջ ինչ դերք ես որ արեւնոտեմ:

—Հա՛, Պօլսոյ ձկան վաճառանոցը քաղը Ե գահականի սքանչելի թրածուկ մը դրեր էին, քաղաքիս առի՛ ախպար գեղը վեցին վար չին խաղալ կոր:

—Աղէկ, սակայն կամայայնի վրայ մինչեւ ելնի մահալլէ, տաքէն պիտի հոտի:

—Բան մը չըլլար՝ այս չորհաւաքը սքանչելից է, աչքը գոցես բանաս Սարը-Եար կը հասնիք, նայա՛ր մը խաղաղ, դուռն ան ըսէ՛ ինձի...

—Խաղ չեմ խաղար:

—Խաղ չեմ խաղար, իրաւ որ տարօրինակ մարդ ես դուռն, անցեալ կիրակի օրը չեմ գործածեր ըսիք, յետոյ զիս լոյիկ դինով ընելով տուել թողուցիք և վերջէն մինչեւ կէս գիշեր ուրիշներու հետ անընդհատ խոսք ես առանց ինքզինքդ կորսնցնելու:

—Այն օրը օղի խմել հարկ էր, խըմեցի, ապա թէ ոչ գաւաթ մը անգամ չէի խմեր:

—Տարօրինակ մարդ ես, տարօրինակ՝ ըսել է այս իրիկուն մէկմէկ հատ չի՞ պիտի կոնքենք:

—Ընդհակառակը, ես ալ հիմա պիտի առաջարկեի որ պիւֆէն երթանք մէկմէկ օղի խմենք:

—Կեցցես, բայց նախապէս ըսեմ քեզ թէ այս անգամ ստակը ես պիտի վճարեմ:

—Ըսածիդ պէս թողըլլայ, արի պիւֆէն երթանք:

Այս ըսելով, երկու բարեկամները պիւֆէին նեղ լոյիկը գացին. Մանուկ աղա անուանեալ պարոնը՝ որ հակառակ իւր յիսուն տարեկան հասակին, ուժեղ մէկը կերեւէր, գիտանալ

իւր բարեկամին պէս խցիկէն ներս մտնելու, դրան առջին կեցաւ, առանց աչքը զտնելու այն քովտի սենեակին դրան փայլէ ուր մեր նկարագրած անծանօթ պարոնը մտնէր:

—Ներս չիգա՞մ, բարեկամ, այդպէս դուռը կեցած օղի կը խմուի:

—Հոգ չէ, այսպէս աւելի հանգիստ եմ:

—Տարօրինակ մարդ, միշտ տարօրինակ:

Անծանօթ պարոնը, որ քովտի օթեակներէն մին մտած էր, չորհաւաքին ներսի կողմը բացուող պատուհանին քով նստելով, սկսաւ անտարբեր կերպով ձամբորդները դիտել. անգաղաքար իւր նայուածքը պիւֆէին դրան առջին կեցող պարոն Մանուկին հանդիպեցաւ:

—Շատ բան, կ'միտայ, ես այս դէմքը տեղ մը տեսած եմ, բայց ո՞ր... Եւ աւելի խորազնին դիտել սկսաւ, յետոյ իւր թէ հին յիշատակ մը մտքէն վաճառուելով, իրաւ որ խնդրեմ, ըսաւ, անշուշտ նմանութեան մը կը խաղալիմ, անկարելի է որ Բուրքին այս պահու Պօլիս գտնուի:

Շոգենաւր ժամը տուն երկուքը ք